

**ՍՐՔԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱԲԱԶԱՆԻՆ ՕԾՈՒՄԸ ԿԸ ԿԱՏԱՐԷ
ՍԱՆԹԱ ԳԼԱՐԻԹԱՅԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ**

Կիրակի, Յունիս 20ի առաւօտեան ժամը 10:30ին Սանթա Գլարիթայի Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցւոյ մէջ Սուրբ Պատարագ մատոյց Առաջնորդարանի Երիտասարդաց Վարիչ՝ Տ. Աւետիս Քհնյ. Աբովեան: Առաջնորդ Սրբազան Հայրը հանդիսապետեց արարողութեան եւ տուաւ օրուան պատգամը:

Ան քարոզեց «Սուրբ Մկրտութեան եւ Վերստին Ծննդեան» մասին, լուսաբանութիւններ տալով Սուրբ Մկրտութեան եւ Դրոշմի Խորհուրդին մասին: «Հայրերու Տօն»ին առթիւ, Սրբազան Հայրը շնորհաւորեց բոլոր հայրերը եւ օրհնեց հայ ընտանիքը:

Սրբազան Հայրը կատարեց Եկեղեցւոյ Սուրբ Մկրտութեան Աւագանին: Մկրտութեան Աւագնին Բարերարներն էին Տէր եւ Տիկին Օննիկ Ուսարսլանեան: Սրբազան Հայրը իր շնորհակալութիւնները յայտնեց անոնց, քաջառողջութեան եւ արեւշատութեան բարեմաղթութիւններ կատարեց իրենց ընտանիքն համար: Արարողութեան աւարտին Սրբազան Հայրը, Տէր Հայրը եւ բոլոր հաւատացեալները մօտենալով մի առ մը համբուրեցին նորած Սուրբ Մկրտութեան Աւագանը: